

լուսնային (որոնց մեջ և աչքի ուղունք՝ աչքով տալու դեմ) և շրջում էին հիշյալ մարգագետնում, փորփորում հողն ու հանում ճըլճըլուկի և մի ուրիշ ռուսի արմատների վրա աճող կաղինաշափ պալարները: Ավղնոցում, ավաղով տրորելով, կեղևահան էին անում սպիտակ միջուկները, արևի ներքո շորացնում և պարկերը լցնելով վերադառնում էին: Թե ինչի համար էին օգտագործում այդ պալարները՝ չէին ասում:

ՄԱՔՐԱԿԵՑՈՒԹՅՈՒՆ

Արճակում բաղնիք չկար, լողանում էին՝ ոմանք թոնրատանը մեծ տաշտերի (պղնձե թաշա) կամ կավաշեն սախենների մեջ, ոմանք՝ փայտի շոլում:

Կանայք ու աղջիկներն իրենց մաղերը լվանում էին տուղտի արմատով, որն աճում էր ամենուրեք, սակայն արճակցի կանայք ու աղջիկները տուղտի արմատը բերում էին դուղի հեռավոր՝ վերին տաշտեր հանդից: Տարին մեկ անգամ, աշնանը, թաղի ջահել աղջիկներն ու իրենց երիտասարդ եղբայրները, մեծ խմբերով, պինված փայտատներով, դնում էին այդ հանդը, երբեմն նույնիսկ հասնում հառակոնիսի արածերին և փայտատներով փորում-հանում տուղտի սպիտակ ու հաստ արմատները:

Լողանալու օրերին մեկ կամ երկու արմատ քսան-քսանհինդ ընկած դրամ էին տաք ջրի մեջ, հետո քարի վրա դնելով մի քիչ ծեծում, այնքան, որ հեշտանար թելիկների բաժանվելը, կապում էին այնպես, որ սաացվեք փնջիկ: Այդ կապված փնջիկը կոչվում էր տղտի թնջուկ: Փոքրիկ մի թնջուկ բավական էր ամբողջ ընտանիքին: Թրնջուկը դիւններին քսելիս ամբողջ մաղերն ու մարմինը ծածկվում էր սպիտակ ու մածուցիկ փրփուրով:

Տուղտի արմատով դուլիս լվանալը դալիս էր դարերի խորքից: Այն գլխի մաղերն ու մաջկը փափուկ պահելու հաակութուն ունեւ և միաժամանակ մաղերին փայլ էր աալիս:

Հաղուստեղներ լվանալու անհրաժեշտ օճաւը մեծամասամբ հայթայթում էին իրենք՝ ասնաիկինները՝ տներում օճաո եփելով: Այդ դոր-

ծում լավ հմտացել էին հատկապես մի քանի տարեց կանայք: Հավաքում էին ամոան ընթացքում կերած ծիրանի կորիզը (որը դաոն էր), ձեթի կառասների տակի նստուկը և միացնելով աշնան մսացուից ստացված ստամոքսի ու աղիքների ճարպերին, օճաո էին եփում: Օճաո եփելու համար անհրաժեշտ նյութերը ձեռք էին բերվում անվճար:

Քազնայի մոտերքից հավաքում էին սպիտակ քարեր, աթարից խարույկ վառում, նախապես ջերտ առ ջերտ այդ քարերը տեղավորելով աթարի արանքներում և երբ մի քանի ժամ տեղը խարույկը գադարում էր վառվելուց, թողնում էին կրակը մոխրանար (մոխրացման ու սառչելու աեողությունը երբեմն օրվա էր հասնում), ապա ցրում էին մոխրակույտն ու հավաքում պատրաստի չհանդած կիրը:

Օճաո եփելու օրը, ըստ կարիքի, բորակաջուր էին պատրաստում՝ երեք շափ ջրին՝ մեկ շափ բորակ: Պատրաստի կրաքարերի վրա եփման ջուր էին լցնում և փալաններով ծածկում: Կրաքարը փոշիանում էր, փոշին լցնում էին թոնրան վրա եռացող բորակաջրի մեջ և հավի թեփ փետուրով փործում այդ խաոնուրդը: Ապա խաոնուրդից ստացված մաքրված ջրի մեջ լցնում էին ճարպանյութն ու մի քանի ժամ եռացնելուց հետո թողնում, որ սառչի: Երեսը կանգնած կիսաեփ օճաոն անջատում էին արդեն ուժը կորցրած ջրից, լցնում նոր, ուժեղ կրարորակային խաոնուրդի մեջ՝ եփում մի քիչ էլ, ու օճաոր պատրաստ էր: Օճաոը սառեցնում էին հողե դանաղան կոտրատված ամանների մեջ ու, այսպիսով, ապահովում օճաոով:

Հաղուստեղներ լվանալիս օճաոի հետ օգտագործում էին բորակ: Քչերն էին, որ լվացքը շորացնելու համար պարան էին կապում: Լվացքը փոում էին պատերին:

Մինչե 1909 թ. Արճակում արդուկ գոյութուն չուներ, հետո էլ քչերն էին, որ տներում արդուկ ունեին: Քիչ խոնավ լվացքը ձեռքով ուղղում էին, ծալում ու դարսում: Ջրի հատկութունից էր, կտորեղենի որակից, թե՞ կանանց վառպետությունից, այնուամենայնիվ, այդ շարդուկված սպիտակեղենը հարթ էր լինում:

Հ Ա Վ Ա Տ Ա Լ Ի Ք Ն Ե Ր

ՍՐԱՎԱՅՐԻՐ

Ասպարածին (Ասավածածին): Գյուղից մոտ երկու վերսա հեռու, արևելյան բլրալանջին, ձե-

ռատունկ անտառիկի կենարոնում էր դտնվում Արճակու Ասպարածին կոչված ավերակ վանքը: Վանքից կանգուն էին մնացել միայն պա-

տերն ու խորանրու երբեմնի հուշան, այժմ շորս
դասար միայն մնացած տաճարի հասակից մի
չանի բարե աստիճաններով բարձր, կամարակապ
խորանը մթին էր և լուսւր սաանում էր բաց դռնից:
Դիմացի պատի ամրողջ տարածութիւնը մարդա-
հասակ բարձրութիւն սեղան էր: Դա մի հսկա-
լական ժայտարեկոր էր՝ տոաչին մասը սրբատաշ
և ունեւր դեղեցիկ խաշաքանդակներ: Վերնամասը
հարմարեցված էր բնիկ հորանի աջակողմյան պա-
տի աակ էր Ասպարաճեա կեհեգմանը, սրի քարն
ամրողջովին ծածկված էր հայերեն արձանա-
դրութիւնը: Լսու ավանդութիւն, այդ դերեղմա-
նում թաղված էր Մարիամ Աստվածածնի դոսուց
մի կտոր:

Վանքի պարիսպների մնացորդներն իսկ
պերճախոս կերպով վկայում էին, որ այն հա-
րատա է կերպ Աստարածնա տմեն ինչը սրբաց-
ված էր ոչ միայն արճակցու, այլև դավաոի ողջ
բնակչութիւն կողմից: Վանքից երկու մնար հետու
դանլուղ աոաա ու սաոն աղբյուրների ջուրը հա-
մարլում էր հրաշալիքով: Վանքի սահմանից դուրս
տոյդ ջրից ոչ մի կաթիլ չպետք է դնաին թոփվելու:
Վանքի շրջակայքի ուտեհներինց պատահականո-
րեն կարված սրեէ ճյուղ տեաք է վանքադատկուն
տարածութիւններում էլ թողնվելու Անդամ աւ-
վակների կողմից բաղված դաղձը սուս տանելիս
պետք էր վզույձ լինելին, սր մի տերեկի շնկներ
սուրի աակ:

Աստարածնու ջրերն անհիշելի ժամանակնե-
րից, երեի վանքի շնե կղած ժամանակից, ուղղված
էին դեպի հյուսիս-արեելակողմի բլրալանջում
փորված փարիկ ջրավաղանր: Խաթրուն-գլուղ կոչ-
ված այդ ավաղանր կս սրբացված էր: Այնտեղ
յողանալու էին դնում ջերմախաուով հիվանդները,
ինչպես նաև բոս ունեցողները: Խաթրուն գլուղի
ջրով էին ոսողվում նրա մոտ դանլուղ Աստվա-
ծածնապատկան արտերը:

Աստարածին ալցելող ուխտավորները մշտա-
պես անպակաս էին: Սակայն Աստարածնու բուն
ուխար նրա սուեի օրն էր (օգոստոսին):

Աստվածածնա տոնի նախօրեին՝ շարաթ օր-
վո մայրամստից, սկսում էին հավաքվել ոչ
միայն դավաոի հայ բնակչութիւնը, այլ նաև Սա-
րայի ասորիները: Քալիս էին դավաոի որոշ քրդա-
կան դյուղերի բնակիչներ, կողմներ: Քալիս էին
անհամար մրդավաճաոներ, ինչպես նաև մանրա-
վաճաոներ: Ուխար սկսում էր կիրակի աոավոտից:

Արճակի եկեղեցական կաղմը Աստվածածնա
խորանի մեջ պատարաղ էր մատուցում, Արճակի
ժամհարը մոմ էր վաճաոում հավատացյալ ուխ-

տավորներին: Դարավոր կեղտից, հալված մո-
սերից սեացած սեղանն ու Ասպարածնա կերեզ-
մանը վաովող մոմերի ջա: էին ներկայացնում:
Իսկ դոսում, ուտեհների հովանու տակ բացված
էին սնում ուխտավորների սուխրաները: Ուխտա-
վոր տղատարդիկ խմրերով մի սուխրայից մյուսն
էին անցնում, երիտասարդ աղջիկներն ու հարս-
ները ձեռք-ձեռքի տված դոսում էին, տարեր
կողմերից լսելի էր նաղարա-դոտոնայի ձայնը:
Նվաղի ներքո պարում էին երիտասարդները
(աոավելապես դոնդապար):

Երկուշաբթին մատաղ անելու օրն էր: Դեռ
լուսը չբացված, դավաոի քուրդ ոչխարատերերը
հաղարից ավելի արու ու էին բերում Ասպա-
րածնա ներքեի փոքրիկ հովիտը, և ուխտավորները
դնում էին: Ի դեպ, Արճակու Ասպարածնա տոնի
օրվա մատաղը պետք է անպայմանորեն արու ու
լիներ, մատաղացուն դնելու տեղում, աոանց սա-
կարկելու: Մատաղացուից ոչ մի կտոր, հում վի-
ճակում, չպետք է աուն տարվելու: Վանի Ակրովի-
կուշվուղ դյուղի սահմեղական դնու մատաղործ-
ներն այդ օրը հսկայական քանակութիւնը մորթի
էին հավաքում (սնվճար):

Ուխար վերջանում էր երկուշաբթի մայրա-
մուտին:

Դարավոր սովորույթ էր՝ տոնից առաջ գնել
բնաանիքի բուր անդամների համար նախատե-
սած ամրողջ տարվա հանդերձանքն ու կոշիկեղներ:
Աստվածածնա տոնի օրը յուրաքանչյուրը, ըստ
իր կարողութիւն, պետք է պատշաճ արաաքինով
մոներ իր ամենօրյա այդ սրբատեղին: Դա յուրա-
քանչյուր արճակցու աան դեկավարի պատվի խըն-
դիրն էր: Շատերի համար այդ խնդիրը լուծվում
էր այնպիսի ծանր դնով, ինչպիսին էր կանխօրեն
իր որեէ արաի դալիք տարվա բերքը վաճաոքի
դնելը:

Աստվածածնա տոնը մեր դյուղացոց համար
հեոուներում ապրող բարեկամների հանդեպ կա-
տարելիք մեծարման, հյուրասիրութիւն պարաքի
տոնեհարամական տահն էր: Տոներից մի քանի
սր աուաջ պետք է դնային մոտուկա, թե հեոա-
վար գյուղի հարադատներին բերելու Իսկ դրա
համար անհրաժեշտ էր ձի տանել: Դժբախաաբար,
արճակցիներինց բշերն էին, որ ձի ունեին, այնպես
որ այդ կս ծանր լուծվող խնդիր էր: Նվ արճակ-
ցին շաս թանկ դնով խնդիրը լուծում էր՝ ձիու
փոխարեն վարճելով փոքրիկ փաախնա կոշվուղ
սալը:

Հաճախ հեոավոր բարեկամներն իրենք էին
պալիս, բերելով նաև իրենց բարեկամներին: Դա

արդեն փրկութիւնն էր տվյալ արձակցու համար: Տանտիկիները մի քանի օր առաջ, յուրաքանչյուրն ըստ իր ընտանեկան պահանջի, ցորեն էին բովում (մեկից-երեք փութ), տղամարդիկ այդ աղունը տանում էին ջրաղաց, աղում: Տոնի նախօրյակին, երեկոյան, թարմ, բուրոզ փոխինզը լցնում էին խմորի տաշտերի մեջ և մի քանի օրվա հավաքած կարագը (որը, ի դեպ, պահում էին թանի մեջ՝ ամեն օր հին թանր թափելով ու նորը լցնելով) թանից հանում էին, ցամաքեցնում ու շաղախում փոխինզր, պարմանք պտածառելով ոչ միայն խնամի վանեցիներին, այլև օտար գյուղերից առաջին անգամ Ասպարածնա տոնին Արձակ հյուր եկած գյուղացիներին:

Աստվածածնա առնին Արձակում գրեթե մարգկային շուռ շէր մնում, եթե չհաշվենք մի քանի կուր ծերերի ու պառավների:

Վարչական ամբողջ կողմը, ոստիկանութիւնը, ինչպես նաև գյուղում ապրող պաշտոնականների ընտանիքները, լուրը դնում էին Ասպարածին:

Վանից քաֆավոր ավետաբան: Գյուղի վերելում, Աջու ճամբախ կոչված ճանապարհին, գյուղի հին գերեզմանատան մոտ էր դանվում հին, տոհմական Վանից (վանքի) տունը:

Վանից առնը, որ ժամանակին սպասարկելիս էր եղել Աստվածածնա հարուստ վանքին, վերջինիս ավերվելուց հետո էլ մնացել էր ոչ միայն մեծահարուստ ու համբավվոր, այլև նվիրական, որովհետև այդ տանն էր դառնում կարմիր կաղնով մազաղաթյա մի ավետարան, թերևս իսկապես էլ նախկինում՝ վանքապատկան: Ավետարանը համարվում էր հգորաղոր ու հրաշագործ:

Տարբեր ժամանակներում ասպատակներից շատերը հափշտակել էին ավետարանը, բայց միշտ էլ Վանից տոհմի մարդիկ, մեծ փրկապնով կամ նույնիսկ կյանքը վտանգի ենթարկելով, վերագարձրել էին ավետարանն ու գրել իր տեղը, այսինքն՝ Վանից թոնրատան միջի մառանում՝ փոքրիկ թմրի վրայի փայտե հին, հասարակ արկղի մեջ, որի բանալին մինչև իր մահը դառնում էր տան ավագի մոտ, ապա նոր նրա որդին էր իրեն իրավունք համարում ձեռք տալ ավետարանին, իսկ կանայք ձեռք չէին տալիս:

Ավանդութիւն կար, որ Լենկ-Թեմուրը Վանից թագավոր ավետարանը ասրել էր մինչև Սամարղանդ: Վանից անից Սարգիս անունով մեկը պարսիկ խառնդի տարսողով հետևել էր ավետարանին: Նա աջխարհասանի բարեհա-

ճությանն էր արժանացել մինչև այն աստիճան, որ կարողացել էր աղատորեն ելումուտ ունենալ այն շենքը, ուր արգելափակված էին եղել բաղում աղբերից խլված դրական արժեքները: Ու մի օր, կեղծ ախունդ-արձակցի Վանից Սարգիսը գողացել էր Վանից թագավոր ավետարանն ու Սամարղանդից վերագործել Արձակ:

1896 թ., հայկական ջարդերի ժամանակ, պոռը կոտորող ու թալանող տասնութ համիգետական աշիրաթներից մի համիգի (Մոկսի կողմերից) տարել էր այդ ավետարանը: 1904 թ. նտ ինքնակամ բերել էր Վտն ու քրդերի հետ սերտ կառ պահպանող վանեցի մի հայ իջեանատիրոջ պտովիլը: Էր ավետարանը վերագործնել Արձակ գյուղի այն տունը, որի մոտ մեծ-մեծ քարերով դեբեղմանոց կա ու ջրաղաց: Ավետարանի տերը՝ Վանից Պիտրոս աղան, որ մի ժամանակ մյուզուր էր եղել, այդ ուրախալի օրը երկու կով էր մորթել, ավետարանը մեռունով մկրտել ավել, ապա միայն տարել էր տեղը գրել:

Սուր Սարգիս սևուն ունեցող քլուրն ու նրա ավետարանը: Առհասարակ տարբեր տոհմերի պատկանող արաբերի սահմանը երկու արտերի տրանքում անհիշելի ժամանակներից կորթ թողնելված բավական լայն սարածութիւններն էին, իսկ գյուղերը սահմանադատվում էին տասնյակ վերստեր բռնող խուրան դաշտերով: Այգպես էր նաև Արձակը իր ենթակա գյուղերի հետ, բացառութեամբ խառնակոնիս հայկական ու մոսուկա Քրդվան քրդական գյուղերի: Արձակապատկան «վիրին տյաշտ» կոչվող վարելահողերը ձգվում էին շատ հեռուները՝ ընդհուպ մինչև Աուրը Սարգիս լայնանիստ ու սրածայր բլուրը, որ Արձակի ու Քրդվանի միջև սահման էր հանդիսանում:

Բլուրն իր արձակահայաց կողմով պատկանում էր Արձակին, նրա հենց փեշին էլ նստած էին երկու աչքտնի երկու ջրաղաց, իսկ մինչև դադաթր անջրդի վարելահողեր էին: Գեռ հեռվից նկատելի էին բլրատգոգաթին եղած շինութիւն ավերակները (բլուրը մի ժամանակ Արձակին էր պատկանել): Հտյանի շէք, թե սուրը Սարգիս հիշյալ ավերակները վանքի, բերդի, թե՛ ամբողջի մնացորդներ էին:

Արձակի մի քտնի կանայք սուրը Սարգիս բլրի աակ տուղաի արմաա քանդելիս գտել էին պղնձե ափսեներ, որով կարելի էր եղրակացնել, որ հիշյալ վայրը ժամանակին հարուստ րնակատեղի է եղել: Հայերը այդ ավերակների հանդեպ սրբաղան հարգանք էին տածում, իսկ Քրդվանա քրդերը, որոնց այդ անդերում հայտնը-

վելը 150 տարուց ավելի չէր, նույնպես այդ ավերակներին հանդէպ մեծ երկուղ ունեին՝ բլրագազանքին չէին մոտենում, ոմանք նույնիսկ խոնկ էին ծխում և բոլորն էլ միարեւրան վկայում էին, թե դրանք հայկական տաճարի հիմքեր են, սովատում էին, թե այդ հիմքերից լույս է առնուհապում:

Խուս Ասնուկ: Դյուղի ներքեւում, քաղաքի ճանապարհի եզրին, լսին մոտիկ (սկզբներում լինի սուղանկից բովական հետու կը եղել, վերջին շրջանում շուրջ մոտ մի կիլոմետր առաջ էր եկել), Բարուիկ կոչված հարթ դաշտավայրի ու նույնքան հարթ մարզապետնի մեջակողմ կար մի փոքրիկ բլրակաձև բարձունք: Բարձունքն սպասում էին մի կողմից կաղկէ ասնը տատկանսդ ուրար, մյուս կողմից՝ տերտուջ ընդարձակ ծառատանք, մի այլ կողմից՝ քաղաքի ճանապարհը: Ահա հենց այս բարձունքն էլ կոչվում էր Խուս Ասնուկ: Բարձրութեան զագաթին, ղեմ դիմաց, շուրջ միահավասար ուշաձ քարերից շուրջ տատ էր արված, սրի ծածկը նույնպես նույնանման մի սալ էր: Քարերից մեկը այնպես էր դրված, որ արանք էր մնում ձևորը ներս տանելու (հրազ զնելու կամ դուրս բերելու): Հինգ քարերից ոչ մեկի վրա ոչ խաչ կար փորված, ոչ էլ մի ուլ նշան: Սակայն այդ Թուխ Ասնուկին վերադրում էին մի շարք հիվանդութունների՝ Լկլեմայի, կրծքի վերքի, ականջացալի, և այլնի բժշկութուն:

Հիշյալ սրբի մասին սովանդութուն չկար, սակայն նրան ուխտի էին դնում ու միայն արձակցի, այլև դավառի ուրիշ դյուղերի հիվանդները: Թուխ Ասնուկին վերադրում էին նաև վստա կրողը բարի դարձնելու զորութուն:

Թուխ Ասնուկին մատուց անելու սովորութուն չկար, ստորապետն զնում էին ու նրա հոգից մի սպասուց վերցնում, ցանում վերքին: Կիրակնամուտերին սաստավները ձեթ էին տանում՝ Թուխ Ասնուկի ճրագները վառում:

1913 թ. արձակցիներից մի բանիսը դյուղամերձ արտերի եզրերին նոր բնակարաններ էին կոտուցում, կաղկէ Տիրան ու Պողոս եղբայրները նույնպես, Թուխ Ասնուկին աւրնթեր բարձունքի մոտ նոր բնակարանի հիմքեր փորելիս բացեցին առճարի ավերակներ: Երևան եկած ամբողջ պատի վրա (չնայած տաշված քարերից էր պատը) ոչ մի խաչ չերևաց, ուստի եղբայրացիք, որ դա հեթանոսական տաճար է եղել:

Դժբախտաբար այդ համոզմունքը պեղման միջոցով հաստատելու ժամանակ չեղավ...

Պագում խաչեր (Բագմաթիվ խաչեր): Գյուղում կար երկու Պագում խաչ, մեկը՝ Քյողարի թաղում, մյուսը՝ Փոս թաղում: Թուխ Ասնուկի նման սրանք ևս քարե շորսական պատ և մի-մի ծածկասալերից բաղկացած մանկական խաղալիք տների նման բաներ էին, բայց երկու Պագում խաչերի քարերն էլ խաչաքանգակ էին: Սրանք էլ այնպես էին դասավորված, որ ներսը ճրագ զնելու հնարավորութուն կար: Նրանցում էլ կիրակնամուտերին հրազ վառողներ էին լինում, սակայն այդ անում էին առանց խնդրանք ներկայացնելու, այլ իրենց հոգու համար:

Քյողարի թաղի Պագում խաչերը, որ գտնվում էր դպրոցին մոտիկ, իր առաջ ունեւր և մի շատ ընդարձակ սարածութուն:

Ավանդութուն կար, որ ղա եղել էր եկեղեցի, իսկ հարթ սարածութունը՝ զերեղմանատուն: Դրա մոտ գտնվող Մոլոյի տան տերերը մի երկու անգամ այդ հարթ սարածութուն եզրին ցանկացել էին ցորենի հոր փորել, երկու սեղից էլ մարդկային ոսկորներ էին դուրս եկել և նրանք թողել էին հողից օգտվելու միտքը (մարդ թաղված հողը սուրբ ու անձեռնմխելի էր համարվում):

Փոս թաղում գտնվող Պագում խաչերը բնակելի սարածութուն նեղիկ արանքում էր: Նրա ծածկասալը սուլիսակ էր, խաչը հենց մեջտեղը մի մեխի պատի էր երևում: Ավանդութուն կար, որ իրը սաշը Չիչուզն է (Նահատետ Քսէլակ) այդ մեխն իր բոունքով խփել հիշյալ քարի մեջ, երբ, ղեւ տաանի, Արձակ էր եկել և հենց այդտեղ էլ երազ սեսել ու երազում ողբնշման, ստեղծագործման խմիչք էր բմուլել:

Այս Պագում խաչերից մի հարյուր քսյլ հեռավորութեամբ անցնում էր դյուղը երկու մասի բաժանող առուն: Առվի մի կողմում եղել էր մի տնհայտ ծաղում ունեցող փոս: Ահա այդ փոսում էին ամփոփվել 1896-ի կոտորածների 108 մեծ ու փոքր արձակցի նահատակների սձյունները: Ամեն մեռելոցի քահանաներն ու սձյունատերերը սկզբից այդտեղ էին դնում մեռել օրհնելու, խունկ ծխելու, նսր միայն՝ զերեղմանոց:

Արձակի զերեղմանատուն սնտաշ ու մամուտատ բարերի վրա փորադրված կային հովվական դավաղաններ (նշան, որ թաղվածը եկեղեցական է) և մեկ էլ հովի պաակեր ու արձանագրութուններ, որոնք այնքան էին քարաքոսերով պատվել, այնպես եղծվել, որ դարձել էին անընթեռներ:

ՍՆՈՏԻԱՊԱՇՏՈՒԹՅՈՒՆ

Սաաանանեբ: Սատանայի գոյութեան հավատում էր գրեթե ողջ ընկալութեան: Սաաանան պատկերված էր մարդկային տգեղ կերպարանքով, ոտքերը՝ հակառակ, այսինքն՝ ոտքի թաթը դեպի ետ: Սատանաները տմենուրեք էին և խանգարում էին մարդկանց: Դրանց հաղթահարելու միջոցը խաչակնքումն էր և Իսուս-Քրիստոս ասելու Պետք է խաչ քաշվեր խմորի, տլուրի երեսին ու նոր միայն բերանը փակվեր: Պանիրը ամանի մեջ շարելիս պետք էր անպայման սկզբից մի մեծ կտոր պտերի վրա խաչ նշվեր և տյգ կտորը ամենասկզբում դրվեր ամանի մեջ և այլն:

Բոլոր տեսակի ուսելիքներն սկզբից ու վերջից կամ խաչ սեռք է կրեին, կամ խաչակրնքում, որպեսզի սատանաները դրանց բաբախաթը չտանեին: Իսկ ամեն տեսակ ուսելիքի ձեռք տալիս, այսինքն՝ մեծ ամանից ուտելիք վերցնելիս, պետք էր «Իսուս-Քրիստոս» մրմնջոյին: «Իսուս-Քրիստոս» պիտի մրմնջային դիշեր ժամանակ (մտնտվանդ մթան մեջ) որևէ շեմք անցնելիս, որպեսզի այնտեղ պահված սատանաները անցնողին չկարողանային խփել, հորտնջելիս պետք է բերանները խտչակնքեին, որպեսզի սատանաները չմտնեին փորը: Նման յուրաքանչյուր դործողութեան սկզբին, եթե դա կապված էր ուտելիքի հետ, պետք էր «Իսուս-Քրիստոսի» անունով կամ խաչի նշանով սաստել ըրիքի թշնամի սաաանաներին, քանի որ Իսուս-Քրիստոսի անունը լսելիս նրանք իր կործանվում էին:

Առհասարակ այն համոզումը կար, որ սատանաներն ավելի աղաա-համարձակ ապրում են ընկալվածքներից հեռու ընկած ավերակներում: Բացի ըրիքներից թշնամի լինելուց, սատանաները մեծ թշնամութուն ունեին ծննդկանների ու նորածինների հանդեպ: Ըստ տեղական հավատալիքի, երբ որևէ դուռում ծննդարերութուն էր լինում, սաաանամայրը տվերակից դուրս էր դալիս և շտապում դեպի ծննդկանի տունը, որ մտներ նրա փորը, պոկեր ջիդյարն ու աաներ ուտեցներ իր սատանայաճուտին: Ջիդյարը տտրած ծննդկանը մահանում էր:

Ջիդյար տանելու ճանապարհվող ստտանան, դուրազիների պաակերացմամբ, ուղևորութեան ընթացքում, անհրաժեշտութեան դեպքում, կերպարանափոխվում էր, վերածվելով մարդու, աղվեսի, դայլի և այլն: Գյուղին հասնելիս, նա ընդունում էր շան կերպարանք, ծննդկանի տունն էր մտնում կտավի կերպարանքով, ծննդկանին

էր մոտենում ճանաչի կերպարանքով և ծննդկանի փորն էր մտնում մազի կերպարանքով, որից հետո արդեն պոկում էր լյարդը:

Սատանաներից պաշտպանվելու նպատակով ծննդկանին երկունքի ժտմանակ երրեք մենակ չէին թողնում, որովհետև այդ ժտմանակ նա անընդհատ պետք է քայլեր, ու մոտը մարդ լինելն անհրաժեշտ էր: Քայլելիս նրա ձեռքը տրվում էր ոչ թե փայտ, այլ թոնրան երկաթե կեռողուխ շիշը:

Աղատվելուց հետո սաոր ջուր բոլորովին չէին տալիս, իսկ սովորական դարձած ախտավր (տաբ յուղը՝ փոքրիկ քանակութեամբ փոխինդ խառնած) խմեցնելիս ուշադիր էին լինում, որ մեջը մազ չլիներ: Մենգկանին տեղից տեղ, այսինքն՝ անկողնից տնկողին չէին փոխադրում: Գիշերները նրա ճրագը չէին հանգցնում մինչև քառասուն օր: Թեև ութ օրական ծննդկանը նորածնի մկրտվելով, մեռնվելով սատանաների հետտպնդումից դերծ էր մնում, ըտյց առաջվա նման առանց խաչակնքելու, առանց Իսուս-Քրիստոս մրմնջալու, նա ըրորըր չէր վերցնում կամ տեղը դնում, նույնը և լողացնելիս:

Գյազնա: Ըստ տվտնդութեան, ամենուրեք ընկալվող սատանաներն Արճտկում ունեին նաև իրենց հատուկ ընկալվածք: Դա դյուղից հեռու, վերևի մասով Աստվածածնա բլուրներին հասած, իսկ ցածի մասով՝ Չնձն կոչվող արտերին հասնող բլուրներից մեկի մեջտեղը եղած խոր, քարքարոտ, երկայն կիրճն էր, որը կոչվում էր Գյազնա:

Ահա այդ Գյազնան սատանաների ընտկավայրն էր:

Լեռնային ձնհալներից գոյացած և իր տնցած ճտնապարհին ստորգված մի փոքրիկ առվակ էր հոսում այդ կիրճի միջով: Վերը, կիրճի մեջ, կար մի տեղ, որ ջատ նեղ էր, և ջուրը ոչ թե հոսում, այլ վիժում էր ցած: Ջրվեժի այդ մասը կոչվում էր Գյազնի խոինչք, ուր ավանդութեան համաձայն, անհամար սատանաներ էին տղմկում, հտւար ու մի ձայնով ողբում, կողկանձում:

Ո՛չ հովիվներն ու դառնարածներն էին տյնտեղ հոտը թշում, ո՛չ կանտք ու աղջիկներն էին Գյազնն բտնջարի գնում, ո՛չ էլ տնցորդներն էին դնում սատանայարնակ Գյոտնայով: Ըստ արձակցիների Գյազնի խոինչքը միշտ էլ լիքն էր անխորաակելի շարքերով, որոնք շաա հեռու վայրերից հալածվել-եկել էին թաքնվելու Ասպարածնա դորութունից ու պատսպարվել Գյոպնի խոինչքի մեջ:

Գյազնի ժայռերի ծերպերին իրենց բույնն

էին հոյուսում ծանրամարմին և աղղարնակչութունից սրբացված արոս կաշվող թռչունները:

Աններևի մեղք էր համարվում ոչ միայն արոսի ճաչ դողանալը, այլ անդամ նրա բնին ձևը ապր, բանի որ այն կարծիքը կար, որ իբր մայր արոսը, երբ հետվից նկատում է, թե իր բնին մարդ է մտակել, ինքը սկսում է իր կուրծքն այնքան խփել ժայռին ու տրորվել ժայռի վրա, մինչև սաակում է: Մեկի վիշառ, ողբը նկարագրելիս ասում էին՝ «Արոսու պես ուր դոշ վեր բարերաց կտրորի»: Հավատում էին որ Գյաղնի շարերն անդամ արոսներին շեն անհանդուսացնում:

Պապերից եկած երկյուղախառն պատումներ կային այն մասին, որ երբ մութն բնկնում է, Գյաղնի մեջ ապրող անհամար շարերը հաղար ու մի սատանայական հնարաններով խաբում են միայնակ ուղեորներին, ասնում Գյաղնի խրոսիչը և այնակից բաշում դժխիս: Որոց-սրդի տմբացած այս երկյուղը ստիպում էր դաշտում աշխատող կանանց, մութն բնկնելիս շանցնել Գյաղնի ձորարերտնով (թերևս այդ անդերում մամանակին ավազակներ էին եղել):

1897 թ. արևտղի հյուսն հասն Ուսեիբ, մի մտայաղեմ ու սակավախոս մարդ, հայտարարել էր, որ ինքը մի երևիս, Չնձև կոչված իր արտը չրելուց վերադառնալիս, իբր, Գյաղնի ձորարերանից մի կանաչի ձայն է լսում, սրբ, հարցնում է.

— Ախի, կտր պյան բյե վո՞վ արաց:

— Քոսքրսոն¹, — լինում է աղջկական ձայնով տրված պատասխանը:

— Վո՞վ կեր դյա, — հարցնում է առաջին ձայնը:

— Քոսքրսոն², — պատասխանում է նույն աղջկական ձայնը:

— Ախի, վյո՞րակը:

— Դյաղնեն:

— Այո՞րթ, ախի, — խիտո ծկրլտուն ձայնով տարցնում է տոաջին ձայնը:

— Վալա, բիլա, թուլա, — սատանայական բրբրիջով երգվում է երկրորդ ձայնը:

Խոսն Ուսեիբ, երեսին խաչ հանելով, վազելով անցնում է ձորարերանի մոտով: Ուսեիբ ասած ժամին այդ տեղերում ու մի մարդ չէր լինում:

¹ Քոսքրսոն՝ արձակի շիրված և վազաչոտի համարվ հանած մի այլի ծերունու մականունն էր:

² Քոսքրսոն՝ խառակոնիցի նույնպես վազաչոտ համարվում ուս Պետրոս ծերունու մականունն էր: Երկուսն էլ մինչև 1915 թվականը կենդանի էին:

Վարակյա տներ: Սատանայաբնակ էին հրոշակված նաև դյուղի հարավ-արևելյան կողմում գտնվող Վարակյա տներ կոչված ավերակները: Գրանք 1870-ական թվականներին Վարադի վանքի կողմից կառուցված և 96-ի կոտորածներին բանված երկարկանի ղեղեցիկ շենքի և իր օժանդակ կառույցների ավերակներն էին: Շենքի շրջապատում եղած մեծ թվով ցորենի գատարկ հորերի բերաններին փարթամորեն աճող վայրի սուլախոտերը ծածկում էին հորերը, և անտեղ խաղացող երեխաները հեշտությամբ կարող էին բնկնել հորերից մեկն ու մեկի մեջ: Թերևս այդ էր եղել պատճառը, որ մեծերից Վարակյա տները համարվել էին սատանայաբնակ, և կամ այն, որ Վարակյա ավերակների հենց դիմացի ճանապարհից քիչ այն կողմ գտնվում էր թուրքական փոքրիկ ու անշուք մի ղերեղմանոց, ուր թաղվում էին թուրք պաշտոնյաների բնասանիքի անդամները. որոնց հողը բաշել էր Արձակում թաղվելու» (սա ժամանակի տիրող համոզմունքն էր): Այսպես թե այնպես, Վարադի երբևմնի լիառատ աները ճանաչված էին սատանայաբնակ: Տեղական թուրք պաշտոնյաները, մանավանդ ոստիկաններն այդ բանին տեղյակ էին: Թերևս այդ պատկերով թյամը էր, որ 1915 թ. աղբիլյան օրերին խառակոնիցի Շիրին Հակոբյանի կնոջն ու իր երեխաներին կենդանի-կենդանի զլորել էին Վարակյա աների ցորենի մի հորի մեջ ու վրաները մի բանի քար շարտելով, «թաղել»: Վարակյա տներում պնդակահարելու էին տարել նաև արձակից 7—10 տարեկան աղաներին, որոնք կղևնի առաջին օրը պատահականորեն կենդանի էին մնացել:

Պուպուլիկ: Պուպուլիկները պակերացվում էին թխամորթ, խիտ-ղանդրահեր, հաստաղուշ, ճրագի նման փայլուն աչքերով, զգրված հանդերձներով մանուկներ:

Պուպուլիկ-սատանայաճուտերի կողմից մարդկանց հանդեպ ցուցաբերված թշնամական վերաբերմունքի մասին առանձնապես ոչինչ հայտնի չէր. բայց հանդուրժելի չէին նրանք: Ուստի ասարվա մեջ մի օր, Ավետման տոնի երեկոյան, տանտիկիները ձևորեն ասած թոնիր խառնելու հսկա փայակ ձողը, վառ ճրագը սուլով փոքրահասակ աղջիկների ձեռքը, թոնրաասան, մատանների, մթերանոցների, ախոտների ու այլ տեղերի շրտ անկյուններում թոնրան անթրոցի (թոնիր-խառնիչ) ածխացած ձայրով խաչ էին բաշում, անբնդհատ կրկնելով՝ «պուպուլիկ, այո՛ւս, պուպուլիկ, այո՛ւս»: Պուպուլիկները փախչում էին»

և խմբերով «գնում-մտնում» Գյաղնան՝ մեծ սա-
տանանների մոտ:

Տավրի շուա (անասունի մերկ): Տավրի
չուտոր բստ հավատալիքի պատկերացվում էր
մերկ տղամտորդու կերպարանքով, որը լուսթյամբ
շրջում էր դյուղից դյուղ, իր հետ բերելով անաս-
նացավ: Նա անխոցելի էր ըրուր տեսակի մի-
ջոցների հանդեպ, խաշակնքելիս չէր խափան-
վում և ասում էր. «Ես ասվրի շուան եմ, գալիս
եմ այսինչ տեղից, գնում եմ այնինչ տեղի»:

Տավրի շուտի երևալը աագնապ էր առաջաց-
նում դյուղացիների մեջ: Հայտնվելով գյուղում,
նա, իրո, կոտորում էր խուշոր եղջերավոր անա-
ւուններին: Այդ ազնաարերին գյուղից հեռացնելու
միակ միջոցը սրբերին մասաղ խոստանալն էր:
Եթե Գեղարդը (էջմիածնի վանքում պահվող եր-
կաթն սրածայր կարճ տեգր, որով զինվորը ծակել
էր խաշված Քրիստոսի կողը՝ ստուգելու, թե նա
մահացած է արդյոք) գանվում էր վանում, ար-
ձակցիք գնում էին, գյուղ բերում ամենափրկիչ
սուրբ Գեղարդը:

Այ՛ք կամ Նիաթ: Աչքի դորությանը շատ-շաաե-
րն էին հավատում: Այսինչ երիտասարդին հիացքով
նայեց այնինչ տնձնավորությունը, երիտասարդն
իրեն վստ զգաց, իսկ այդ անձնավորության «աչքն
արդեն փորձված» է: Երիտասարդը նրա աչքից է
հիվանդացել, թեկուզ այդ հիվանդությունը լիներ
զլխացավ, ջերմ կամ քթից արյուն հոսեր:

Նույնը պատահում էր և աղջիկներին: Նրանց
լավ ձևոագործի, գեղեցկության, շնորհալի շարժ-
ուձևի վրա շատերը կարող էին հիանալ, սակայն
Լթե տղիկն իրեն վաա էր զգացել, տսենք՝ մատ-
նաշուրթ էր ստացել, ստյթտքել էր և ընկնելիս մի
վնաս էր պատահել (ուսին դրած ջրի կուժն էր
կոտրվել, թե ձեռքը կամ ոտքը), այդ պատահարից
առաջ ով որ նրան հիացքով նայել էր, հենց այդ
նայողի աչքից էլ աղջիկը «աչք էր առել»:

Աչք էին առնում անասուններն անխտիր՝
լծկան, կթան, մատղաշ: Աչք էր առնում ամանի
մեջ լցված կաթը՝ կտրվում էր, խնոցում շցված
մածունը՝ յուղ չէր սուլիս: Աչք սոած կթանի
կուրծքն ուռչում էր, ու կաթն էլ տհաճ համ աա-
նում, մաաղաջ գառներն ու հորթերը սաակում
էին, նորածին դոմշակովերը կաաաղորեն խփում
էին կթողներին ու թույլ չէին տալիս մոահնալ
իրենց, երբեմն նրանք «աչքի» պաաճաոով թույլ
չէին տալիս իրենց ձագուկներին կաթ ծծել:

Աչքի նիաթին ենթակա էին ամենքը և ամեն
ինչը, սակայն ամենից շաա՝ երեխաները: Այսինչ
բարեկամուհին առաջին անգամ տեսավ երեխային,

գուրգուրեց. իսկ հետո երեխան հիվանդացավ.
ուրեմն՝ նրա աչքից էր: Եթե աչքով տվող անհատի
վրտ այնքան վստահություն ունեին, որ եթե նրան
ասեին՝ ոչ մի անախորժություն չէր սաեղծվի,
սույա տսում էին: Աչքով տվողը գալիս էր «աչք»
առածին նորից էր գուրգուրում, թքում նրա վրա,
հաճախ իր հագուստից մի դերձան էր տալիս կամ
զլխից մի քանի մազ և դնում: Հագուստի ծվե՛ն
էր, թե՛ գլխի մազ, վաոում էին փոքրիկի քթի
առաջ, այնպես որ ծուխը կալչեր ևրեխային: Իսկ
Լթե աչքով տվողի վրա վստահ չէին, վախենում
էին վիրավորվի, կուլի, սույա դազտսոդոզի էին
ձեռք բերում նրա հագուստի ծվենը կամ գլխի
մազը, կամ վերցնում էին նրա ոտքի տակի հուլը
կամ նրա դոնից մի փոքրիկ տաշեղ էին փրցնում:
Ծվեն էր, մազ էր, թե ատշեղ, այրում էին երե-
խայի քթի տակ, իսկ եթե ոտքի տակի հողն էր,
սպա լցնում էին մանկան լողացնելիք ջրի մեջ:

Տարափոխիկ հիվանդությունների դեպքում
այնպես էին դասավորում, որ օաարները քիչ
տեսնեին հիվանդ երեխային: Շատերն իրենք էին
խուսափում հիվանդ մանկանը նայել, որպեսզի,
աստված մի արասցե, մի բարգություն սոեզծ-
վելիս շասեն թե նրա աչքից է:

Դուլվաթ: Դուլվաթը համարվում էր ընտանիքի
կարողության պահապան անտեսանելի բարի
ուզին: Դուլվաթ ունենում էր յուրաքանչյուր ընտա-
նիք: Դուլվաթը յուրտհաոուսկ կերպարանք չուներ:
Մի ընտանիքում նա կրում էր մարդկային կեր-
պարանք, մյուսում՝ թունաղուրկ օձի, մի այլում՝
տնասունի և այլն:

Դուլվաթը սպ ու պապերի ժամանակներից
սպրում էր տվյալ տան մթերանոցի կամ տվելի
շատ՝ փայախների որևէ անկյունում:

Դուլվաթը կարող էր խոովել ընտանիքից
երկու դեպքում՝ անասուններին շխամելու և տսն
աշմքը փոխելու, այսինքն՝ նոր տուն կտուուցե-
լու ու հին տունը լքելու դեպքում:

Գյուղում կույին որոշ նախապաշարված ծե-
րեր, որ պերագասում էին բնակվել պուպենակուսն
խարխլված, կիսամութ տանը, քան նոր, լուսա-
վոր բնակարան կաոուցել, որովհետև վախենում
էին «գուլվաթի խոովելուց»։ Նման համոզում ունե-
ցույները նոր բնակարան փոխադրվելուց հետո,
դնում էին հին կացարանը, դուլվաթի համար
ճրագ վաոում, լսելի ձայնով խնդրում նրան՝
տեղափոխվելու իրենց նոր կացարանի որ ան-
կյունը որ կամենում է: Եվ այս անում էին այն-
քան ժամանակ, մինչև որեւէ երազ աոիթ էր

տալիս համոզվելու, թե զոլվաթը փոխադրվել է նոր տուն:

Գուրաթը հարզվում էր ընտանիքի բոլոր տնկամեններից, առավելապես՝ տան ծերունիներից:

Կուրգաթը: Կուրգաթը տանու, հին, անտեսա-
նելի բարեկամ ողին էր: Կուրգաթը պատկերաց-
վում էր կանացի կերպարանքով: Երիտասարդ,
նեղ ու խոնարհ հարս կամ ջանասեր ու ամոթխած
աղջիկ էր նա. սր ապրում էր կամ թոնրան
ակտն մեջ. կամ ալյուրի ամբարի ևտեր, կամ
մթերանայի որևէ տնկյունում:

Կուրգաթը տնտեսանելի կատարում էր տան-
տնիկների աշխատանքի ղեկավարին մասը. պահ-
պանում սըրսոցի մանուկներին՝ և՛ թե տանը ոչ ոք
չէր լինում:

Բարեխորա տանտնիկները հող թխելիս կուր-
գաթին սրպես բաժին, մի փոքրիկ կտտի կտոր
էին զնում թոնրան ակտն մեջ: Կուրգաթը ոչինչ
չէր ուտում, միայն բավարարվում էր այդ կտտից
հոսա բաշխով:

Կուրգաթին սիրում է նրա կատարած աշխո-

տանքի համար օրհնում էին ասն տարեց տան-
տնիկները: Կուրգաթը կանացի հարզված անձն-
անուններից էր:

Թազա ճաց ու մատաղ: Թազա ճաց էին
խոստանում ասածուն՝ որևէ զժվարին վիճակի
մեջ ընկնելիս կամ ծանր հիվանդության դեպքում
սիրեցյալ անհասի հիվանդության ժամանակ կամ
սրբէ նպատակի հասնելու աղերսանքով և այլն:

Մայրամուտին շաղախում էին խոստացված
բանակի այտորը, կեսգիշերին սկսում էին թխել
նացն ու ղեռ յուսաստղը գուրս շեկած, տների
երգիկներից ցած էին պցում ևրկուսից-ևրեր յու-
վաշ, նևար կանչելով՝ «Այսինչ (տանտիրոջ
անունն էին տալիս), արթնացեք, այսինչի «Թա-
զա խացն իս «Աստղած ընթունելի անի: — պա-
տասխանում էր տանտերը:

Նույնն էր և մատաղը: Միայն թե մատաղը
էփվում էր ցերեկը, միսը մսաջրի հետ տմանով
էր բամանվում: Մատաղ, թե Թազա ճաց կանչող
անձն ինրը չէր նաշակում ոչ մեկից և ոչ էլ հյու-
րասիրում բարեկամներին:

Ժ Ո Վ Ո Վ Բ Գ Ս Կ Ս Ն Տ Ո Ն Ե Մ

Կապույտ: Կապույտը կամ նոր տարին շատ
աննշան ու անշուր տուն էր: Բոլոր տներում էլ
այդ սրբ ստվարականից շատ էին սպանձ տնում
ու մեջն էլ շամիչ, ընկալչի և կաղինի միջուկ
խառնում, սպա՝ իրար հանդիպելիս մեկն ասում
էր՝ «բյու կաղանդ շնախալսր բլնի», մյուսը
պատասխանում էր՝ «բյունն էլ շնախալսր բլնի»,
հմեն ասրի պարով էս օրվան խառնենք»: Եվ
զրոնով էլ վերջանում էր նոր տարվա ամբողջ
նշանակալիսթյունը:

Պրատիկ գտալիկ: Հունվարի հինգի ևրեկոյան
գտալիկ խրամն էր: Գեա նախընթաց օրվանից
կանայր շնայած պաս էին պահում, բայց պատ-
բաստում էին պողպաքն ու բազրբը: Լվացք էին
տնում, մեծ ու փոքր յոզանում էին և հինգի
տտալտայան, սրչալուլի հետ, չուրարանչար
տանտնիկին իր ընտանիքի հարս ու աղջիկներին
վերցրած, զնում էր ևրեկոյան:

Նկեղեկի էին շտապում թե՛ տարեց ու ծեր
սպամարդիկ, թե՛ հավատով լեցուն ու թերահա-
փտա ևրիտասարդներ ու մանկահասակներ:
Մամասացության տվարտին զղեստավորված պա-
տարաղիչ բահանան նստում էր բեմի ստաջ.
մտտենում էին նրան, ինչպես միշտ, ալտտեղ հո
նախ՝ այն սպամարդիկ (ծերերը), որոնք սրոշն

էին հազարգություն անելու նրանք մի բանի բողե
մեկում էին բահանայի ասաջ, ստանում իրենց
մեղրերին թողություն ու զուրս զալիս: Մանուկ-
ների, ևրիտասարդ-աղջիկների և առհասարակ
բոլոր կանանց համար էլ պարտաղիր էր տարվա
մեջ ևրկու անգամ, այն է՝ փոքր և մեծ պատիկ-
ներին, հազարգություն ատնելը, և բոլորը լցվում
էին բեմ, մի բանի բողե ծունկի պալիս, մի բանի
տեղամ բահանայի հետ կրկնում՝ «ողորմիա
մեղավորիս», և արդեն խոստովանած տուն վերա-
զառնում:

Սոմ բերանով, մայրամուտից առաջ, նորից
ժողովորդը զնում էր ևրեկոյան, լսում պատարազ,
հետո հազարգություն ատնում: Մինչև հիշալ արա-
բողությունների ավարտը արեամուտ էր լինում,
ու ժողովորդը նստում էր խիստ մի լիստատ սե-
ղուն:

Խիստ մի որն սրվելված էր սրբէ մոնկեն
կերակուր:

Խիստ մի սեղանին, ըստ ստվարության, լինում
էր զոշաբով ու այլուրով ևրված նաշ, ոշտայով
ու ձավարով խոռը փյալ ու գյուղական ջրուր:

Նր խիստ մի արած-պրծած էին լինում, 12—
14 տարեկան տղաները, խմբերի բաժանված,
զնում էին «Ավետիս» ևրդելու հուսմբ-խամբ ևլ-